

ներու ամիոյի հրատարակութիւնը մեր 98 Ձեռագրէն հանելով:

\* \* \*

6. Բաց ի կալիսթինեայ Աղեքսանդրի վարուց նոր խմբագրութենէն ունինք Չաքարիայէն նաեւ հարուստ թուով տաղեր: Երկու խմբի կրնանք բաժնել զասոնք. 1. Հարազատք եւ 2. Երկբայականք: Վասն զի մեզ ծանօթ են «Չաքարիա եպիսկոպոսի» ընծայուած 14 տաղ, որոնց սակայն մէկ տաղասացի վերաբերին դժուարին է հաստատել: Ասոնք են.

#### Ա. ՀԱՐԱԶԱՏՔ.

1. Տաղ ի խժըժեցւոյ Չաքարիա եպիսկոպոսէ ամենայն Գնունեաց:

«Առաջին մարդոյն նմանիս...»

2. Տաղ վարդին եւ Բլբուլին ի Չաքարիա եպիսկոպոսէ Գնունցւոյ:

«Ահա պայծառացաւ լոյսն արեգական...»

3. Տաղ վարդին եւ Բլբուլին ըստ անուան երգողին ի Չաքարիա եպիսկոպոսէ:

«Իսկ գարունն երբ քաղցրիկ հնչէ.»

4. Տաղ վարդին եւ Բլբուլին ի Չաքարիա եպիսկոպոսէ:

«Այսօր դառնայ արեւն ի խոյն...»